

պատասխան ընդունեց, որ տարի մը նաեւ համբերեց եւ նոյն խնամքով կը հոգար իր սիրական քեռորդին, միշտ սպասելով դարձեալ, որ պատասխան կ'ընդունի հայրենի երկրէն: Չէր գիտեր խեղճ մարդը, որ Կամսարականք խաբուած էին Մուշեղէ, որ Գրիգորի եւ Սուրենի գերութիւնը լսելով՝ նոցայ մահուան լուրը ամէն տեղ ջանացեր էր տարածել, իբրեւ թէ սուրհանդակներ հանած, լրտեսներ դրկած եւ Ասորեստան եւ Ասորիք իմացեր էր ստոյգը: Եւ այսպէս հաւատացացեր էր նաեւ Կամսարականաց, որ դրամի պէտք ունենալով՝ Սուրենի ժառանգութիւնը ծախէր էին Բագրատունեաց, ինչպէս վերը իմացանք Յուսիկէ: Սուրեն տոկուն եւ խելօք մարդ էր, ուստի տեսնելով վիճակը, իմանալով օրաւոր արաբաց յաջողութիւնքը եւ համարելով գերութեան տարիները, որ չորս կը լինէին՝ սկսաւ յուսահատիլ: Ուստի հարկաւոր սեպեց Գրիգորի հետ խօսակցութիւն մը նաեւ ունենալ, եւ որովհետեւ կը տեսներ Գագրիկ թէեւ շինական մարդ՝ Գրիգորի խելքէն էր՝ եւ հաստատ իւր կրօնից մինչեւ ի մահ: Ուստի առանձին Գրիգորի այսպէս խօսեցաւ.

— Որդեակ Գրիգոր ահա գրեթէ չորս տարի է, որ մենք շղթայներու մէջ կապրինք, եւ այս վիճակին մէջ անցնել թեպէտ մեծ առաքինութիւն է, բայց պէտք է խոստովանիմ, որ մեր ազատութեամբ, երբ կրնանք օգտակար լինիլ մեր հայրենի երկրին, աւելի մեծ առաքինութիւն ըրած կը լինիմք:

Գրիգոր այս խօսքերուն ամենեւին պատասխան չի տուաւ, գիտենալով թէ խօսքին նշանակութիւնը եւ վերջաբանը ո՛ր պիտի յանգեր: Իսկ Սուրեն առանց շփոթելու նորա լռութենէն՝ դարձեալ հանդարտութեամբ շարունակեց.

— Դու լաւ գիտես, վասնզի արդէն այս բարբարոսաց լեզուն կը հասկնայ ս կատարեալ եւ կը խօսիս, որ ինչչա՛փ աւար եւ գերի բերեր են Յայաստանէ այս օրերս, որ Դուին առէր այրեր են, որ մինչեւ հիմա քրիստոնէութիւնը ի՞նչ ահագին վնաս տեսած է այս գազաններէն՝ նստած բնակած տեղերնիս նաեւ կը վկայէ, որ քրիստոնէի բնակարան է եղեր քանի մը տարի առաջ. ուրեմն որը՞ լաւ է, այս գերութեան մէջ յամառութեամբ մեռնի՞լ թէ ազատիլ երթալ հայրենի երկիրը, կռուիլ նորա պաշտպանութեան համար եւ փառքով ու պատուով մարտիրոսանալով, նմանիլ մեր նախնեաց՝ Վարդանայ, Վահանայ, Արշաւրի եւ իրենց ընկերաց... Պատասխան չե՞ս տար:

— Ի՞նչ պատասխան կ'ուզես, որ տամ. եթէ այդ քաջերոմն կենաց մէջ մեծ յանցանք մը, մեծ արատ մը կայ՝ ուրացութիւնն է. եւ ես այդ յանձն չեմ կրնար առնուլ. մահն ինձ հազար անգամ սիրելի է: